ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՀԱՅՔ

(շարունակութիւն տես՝ թիւ ԺԵ. վերջ)

Բացատրենք արդ Հայոց պարտաւորութիւնները որ առ Ս. Էջմիածին։

Հաւատալով՝ որ Ս. Էջմիածինը Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյ առաքելական յաջորդութեան Աթոռոյ միածնացոյց կայարանն է, ուր պարտաւոր են միշտ իւրեանց իշխանութիւնը վարել ամենայն Կաթողիկոսք(*)։ Հաւատալով նաև՝ որ Հայաստանեայց եկեղեցին երկրորդ անգամ ըստ հոգւոյ լուսաւորութեան Հայկազանց՝ այստեղից իւր տարածումը աւելացուց և քան զառաջինն շքեղապանծ փառաւորեցաւ և հաստատեցաւ, ուրեմն պէտք է ամենայն Հայոց՝ մտադիր հնազանդութիւն և հպատակութեամբ նորա երկնաձիր շնորհաց բաշխումը և հոգեկան Մխիթարութիւնները ընդունիլ, Որոնց բարեկարգութեանց և Տիրասահման ու Հայրապետական օրինաց կատարմամբ։

Հայոց պարտաւորութիւնները չէ միայն հաւատալ՝ եթէ սուրբ Էջմիածինն է կեդրոն Հայ—Աղգութեան և Ս. Կրօնին, ըստ որում "Հաւատք առանց գործոց մեռեալ է", կ'ասէ Ս. Գիրքը՝ այլ և փութով և ջանքով աշխատիլ նորա պայծառութեան. . . ։

Ջանքով աշխատութիւնը տեսակ տեսակ են և կը յարմարին իւրաքանչիւր մարդոց ընդունակութեան՝ կարողութեան և արժանաւորութեան։

Ջանքով աշխատութիւն է՝ անկեղծ սրտիւ և սիրայօժար ըղձանօք զանձն հոգւով և մարմնով նուիրել 'ի պաշտօն՝ 'ի փառաւորութիւն և 'ի պարծանս Ս. Եկեղեցւոյ և Աղգի՝ առանց անվայել և հակաքրիստոնէական մտադրութիւններ ունենալու։

Ջանքով աշխատութիւն է՝ ինչպէս կը հաւատայ կը յուսայ և կը սիրէ, նոյնպէս պատրաստ և անձնանուէր լինիլ հանապազ կրօնից և Աղգի պաշտպան և պահապան՝ հանդիսանալու՝ միասիրտ և միախորհուրդ բաղձանօք։

Ջանքով աշխատութիւն է՝ ըստ մտաւորական կարողութեան 'ի դաստիարակութիւն 'ի լուսաւորութիւն և 'ի յառաջադիմութիւն արենակից եղբարց և ազգակցաց օգնել՝ յօգուտ և 'ի հաստատութիւն Աղգի և Ս. Եկեղեցւոյ։

Ջանքով աշխատութիւն է՝ ըստ նիւթական կարողութեան՝ ինչպէս որ մարդասիրական օրէնք է և քրիստոնէական պարտաւորութիւն, չ'զլանալ հարստու-

(*) Թէպէտ երբեմն այս Աթոռը այլ և այլ տեղեր փոխադրուեցաւ, բայց պատճառը ժամանակաց դառն բերմունքներն էին. իսկ Հայոց/բուսացի իղձը և սիրտը աստ էր, և հանապազ եռանդագին բաղձանօք կ'աշխատէին Միածնին ընտրած և ցցուցած տեղը առաքելական Յաջորդաց Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց Աթոռատիստ առնել. որում և ըստ բաղձանացն արժանանալով՝ կը վայելէ որ ոդիքն ևս իւրեանց նախնեաց բարենախանձ իղձը (և այլ սոյնպիսի քաջութիւնքը և սիր գործութիւնքը) սնուցանեն իւրեանց սրտից մէջ յաւէտ։

թենէն իբրև տասանորդ բաժին հանել ս. Լուկեղեցւոյ և աղգի 'ի նուէր։ Լու այլն և այլն։

Հաւասիկ այսքանով կ'ամփոփուին ջանքով աշխատելուն (կամ աշխատութեան) կարևոր բացատրութիւնքը, որ եկեղեցասիրութե՞ քրիստոնէական կրօնասիրութեան և ազգասիրական կատարելութեան յաւէտ պիտանի պայմանքն են։ Որոմ մեք՝ Հայք՝ պարտաւոր եմք մեր իրաւանց հետ արթուն հսկողութե՞ և հարազատութեամբ գործադրել։ Մանաւանդ այժմ՝ որ ս. Լիմիաճինը ըստ նիւթականին գրեթէ չհամապատասխաներ բաղմապիսի պարտուցը կատարման. ուստի և չէ կարող իր պաշտօնները ճիշտ և անթերի ըստ արժանւոյն կատարել. Թողունք այլ վանուց թշուառ՝ անխնամ մնանգամայն և ողբալի վիճակը, դիտենք առաւելապէս կարևորագոյնները։

Հաւալի է ասել՝ եթէ Հայք ցրուածք ամեն կողմն աշխարհս, ըստ մեծի մասին համարեա՝ թէ հէգ՝ անայցելու և անտէր դրութի՞ կը տագնապին 'ի տառապանս. տգիտութիւնն նոցա կորստեան՝ և անհետ կորստեան վիհեր և դա՛ռարթներ կը պեղէ։ Ի իստ շատ կողմերը ժողովուրդը այնքան աղքատ՝ որ ո՛չ և մի դպրոց անդամ կարող են շինելու, որպէս զի անդանոր իւրեանց զաւակները բարոյական և մտաւորական լուսաւորութեան մուտքը ընդունին և զարգանան. ու ապագային իւրեանց անձանց ու Աղգի և Լուկեղեցւոյ օգտակար և անձնանուէր անդամներ հանդիսանան։

Լակ ս. Լիմիաճինը, որ ըստ ամենայնի պարտաւոր է այսպիսի՛ կարօտութեանց խնամատար և մատակարար լինիլ աթթուն և բանիբուն հսկողութեամբ, ցաւ 'ի սիրտ կը պարտաւորիմ ասել, որ գոգցես անձեռնահաս դրից մէջ կը տատանի, ըստ որում իւր ամբողջ որդւոց սիրտը ըստ ամենայնի իւր հետ վշտակից և ըստ նիւթականին նպաստաւոր և աշխատակից չէ՛։

Հայե՛ր, Հայե՛ր. Թողէք լոկ անձնական օգուտը, Թողէ՛ք անհոգութեան և անտարբերութեան քունը և թմրութիւնը, որք լաւ հետևանք չեն կարող բերել երբէք. արթնցէ՛ք և գիտացէ՛ք որ ձեզ բարոյական... երջանիկ ապագայ մի պատրաստ է յԱստուծոյ, բայց զայն ջանքով և անձնանուէր աշխատութեամբք կը կարողանաք 'ի ձեռս անցուցանել։

Լակ այժմ Ձեր կողմանէ լինելիք գլխաւոր և ամենակարևոր ջանքը և աշխատութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ հսկել՝ որ ս. Լիմիաճինը մեր յատկութեանց միշտ կեդրոն հանդիսանայ, հրսկել՝ որ ս. Լիմիաճինը իբրև կեդրոն՝ իւր պարտքը և յատուկ պաշտօնը հատուցանելու ձիրքերը և միջոցները ունենայ. հսկել՝ որ ս. Լիմիաճինը Աղգի և ս. Լուկեղեցւոյ անօգուտ վիճակի են թակայ չը լինի. հսկել՝ որ ս. Լիմիաճինը ո՛չ երբէք ըստ նիւթականին և ս

կարևոր պիտոյից պակասութիւնքը և կարօտութիւնը ունենայ. Հսկել՝ որ ս. Լուսաւորչին, լիանայ և զօրանայ, որպէս զի Աստի և ս. Լուսաւորչոյ կարօտութիւնները լիովին մատակարարէ և զնուազ զօրացնէ ըստ արժանւոյն. Հսկել՝ որ ս. Լուսաւորչին հանայն Հայկազանց բարի բարի օրինակներով և նախանձելի սրբութագործութեամբք՝ ուրախութեան և մխիթարութեան արձաններ կանգնէ. Հսկել՝ որ ժամանակիս ողջախոհ լուսաւորութիւնը և դաստիարակութիւնը մեզ՝ ի բարիս աջակից և օժանդակ սիրի մեր Հայրենեաց զաւակաց մտքերուն անդաստաններում. Հսկել՝ որ աՀեղեին հակառակ դէպքերու որոգայթները զմեզ՝ ի կորուստ անկաւ ողանան մատնել և մեր առաջնորդարանին վնասակար բռնութիւնք և ամենայն զօրութիւնք. Հսկել՝ որ երկնից ամենակալ նախախնամութեան Աջը մեզ զօրաւիգն և պահապան լինի, և Աստուածորդ բարի և յաւիտենական՝ ի գիւտ երջանիկ կենաց և պարծանաց. միով բանիւ՝ Հսկել՝ որ ս. Լուսաւորչով մեր բոլոր բարի նպատակները և բաղձանքները լրումն ստանան. և նորա վեհ գագաթը մեծափառ պսակուի։

Աստուածիկ Հայկազանց պարտաւորութեանց ըստ ժամանակիս անհրաժեշտ մի նկարագիրը՝ կամ թէ լաւ ևս ասել՝ մի ուրուագիծը, զոր կատարելը ազգային անհատական պարտաւորութիւն միանգամայն և իրաւունք է. և որուն Հայը անձկանօք պիտի դիմէ իբրև իւր սրբազան պաշտման։ Այս կնքեմ խօսքս, յուսալով՝ որ ինչպէս ս. Լուսաւորչին իւրաքանչիւր Հայկազանց համար նուիրական է, որպէս կեդրոն Հայաստանեայց առաքելական ս. Լուսաւորչոյ, նոյնպէս և նուիրական են և պէտք է լինին միշտ սոյն պարտաւորութիւնները. զորս ո՞րքան քաղցր և անձկալի է նուիրել՝ ի պարծանս ս. Լուսաւորչի, որով և՝ ի յառաջադիմութիւն և՝ ի փառաւորութիւն Հայրենի Աստուծոյ։

Աստուա՛ծ ս. Լուսաւորչին և Հայ ազգութիւնը պէտք է լինին մերնպատակը, մեր ցանկալի գանձը, որոնց մէջ պիտի կեդրոնանան մեր սրտերն և անբաժան յաւիտեան։ "Որ գանձք մեր են, անդ և սիրտք մեր եղիցին"։ Ա.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ներկայ տարւոյս՝ վերջին դեկտեմբերի մէջ ընդհանուր ժողով գումարել կամելով ս. Պատն՝ ի Հռովմ, հրաւիրանաց նամակ առաքեր է նաև առ ս. Պատրիարքն Հայոց Պոլսոյ։ Որ և նա յատուկ գրութեամբ իւրով ներկայացուց Նորին Ս. Եհատարութեան ս. Լաթողիկոսի ամենայն Հայոց։

Ասդ թէ գեր. Պատրիարքի նամակի և թէ Ս. Եհ. ս. Լաթողիկոսի պատասխանական Լոնդակի օրինակները կը փու-